

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Լսողական ծրագրի հաճախականության օգտագործման լիցենզավորման մարզային սփռման մրցույթի մասին

1. Լիցենզավորման ենթակա գործունեության տեսակը՝ լսողական ծրագրի հաճախականության օգտագործում:
2. Սփռման տարածքը և հաճախականությունները՝ ՀՀ Արարատի մարզ, գ. Չովաշեն՝ 94.0 ՄՐց, ք. Վեդի՝ 94.7 ՄՐց և ք. Արտաշատ՝ 94.3 ՄՐց:
3. Մրցույթին մասնակցելու համար ներկայացվում է՝
 - 1) հայտ (ձևը կցվում է),
 - 2) փաստաթուղթ՝ լսողական մեդիաձառայություն մատուցողի նախանշված նպատակների իրագործման հիմնական ուղղությունների և միջոցառումների ընդհանրական նկարագրի վերաբերյալ՝ անդրադառնալով հետևյալ չափանիշներին՝
 - սեփական արտադրության հաղորդումներին,
 - հայերեն հաղորդումներին,
 - բազմակարծությանը,
 - հայտատուի տեխնիկական և ֆինանսական հնարավորություններին,
 - աշխատակազմի մասնագիտական պատրաստվածությանը,
 - ազգային, համամարդկային, հոգևոր, մշակութային մնայուն արժեքների ճանաչողությանն ու ամրապնդմանն ուղղված հաղորդումներին,
 - գործող լիցենզավորված տեսալսողական մեդիաձառայություն մատուցողների դեպքում՝ գործունեության իրականացման ընթացքում լիցենզավորման հայտով ստանձնած պարտավորություններին համապատասխանությանը,
 - 3) ֆինանսական աղբյուրները հիմնավորող փաստաթղթեր,
 - 4) տվյալներ օգտագործվելիք տեխնիկական միջոցների վերաբերյալ,
 - 5) տեղեկություններ աշխատակազմի քանակի, նրանց կրթության և մասնագիտության վերաբերյալ,
 - 6) Էթիկայի կանոնագիր,
 - 7) Էթիկայի կանոնագրի դրույթների ապահովման ինքնակարգավորման միջոցները,
 - 8) մրցույթին մասնակցելու համար 900005164588 հաշվեհամարին «Պետական տուրքի մասին» օրենքով սահմանված 150 000 ՀՀ դրամ պետական տուրքի վճարումը հավաստող անդորրագիրը:
4. Հայտին կից փաստաթղթերը ներկայացվում են երեք նույնական փաթեթով՝ յուրաքանչյուրը թելակարված, համարակալված, վերջին թերթի հետնամասում, կարի վրա փակցված պիտակով՝ «Բաղկացած է ... թերթից» գրառմամբ («...» նշվում է թերթերի քանակը), ստորագրված և կնքված (կնիքի առկայության դեպքում): Փաթեթները ներկայացվում են փակ ծրարով՝ ստորագրված և կնքված (կնիքի առկայության դեպքում):
5. Հայտերն ընդունվում են 2026 թվականի հունվարի 26-ից մինչև փետրվարի 16-ը ներառյալ, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժամը 9:00-18:00-ը: Հայտերը և կից փաստաթղթերն անհրաժեշտ է ներկայացնել Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողով՝ ՀՀ, ք. Երևան, Իսահակյան 28 հասցեով:
6. Լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար զանգահարել 010 52 94 06 հեռախոսահամարով կամ գրել licensing@tvradio.am Էլ. փոստի հասցեով:

Հեռուստատեսության և ռադիոյի
հանձնաժողովի նախագահ

ին

(անուն, ազգանուն)

Հ Ա Յ Տ

**Լսողական ծրագրի հաճախականության օգտագործման
լիցենզավորման մրցույթին մասնակցելու**

Հայտատուի անվանումը

Գտնվելու/հաշվառման վայրը

Պետական գրանցման / հաշվառման համարը

Հեռախոսահամարը, Էլ. փոստի հասցեն

Սփռման

տարածքը

Տեղեկություն

հեղինակագործման

վերաբերյալ

Նանդադրել եմ «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 15-րդ հոդվածի պահանջներին:

Կից փաստաթղթեր՝ _____ թերթ:

Հայտատու _____
(անուն, ազգանուն)

_____ (ստորագրություն)

Կ.Տ. (կնիքի առկայության դեպքում)

_____ (օրը, ամիսը, տարեթիվը)